ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

13 մարտի 2023 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 (տասնմեկ) անդամներ:

Բացակա էին Ավագ Սահակյանը, Արմեն Սարգսյանը, Վալենտինա Կաղիյանը, Լիանա Գևորգյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:

Նիստին ներկա էին համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Շուշիկ Ասատրյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետներ Սարգիս Ղազարյանը և Մարատ Պետրոսյանը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնհինգ անդամներից նիստին ներկա են տասնմեկը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 13-ի երկրորդ նստաշրջանի հերթական թիվ 4 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

4.Փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին:

5.Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 13-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 23-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՇՈՒՇԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության (ակտիվների և պարտավորությունների) 2022 թվականի պարտադիր գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն NN 1-9 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 3

Որոշումն ընդունված է. /որոշում N 24-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 3

Որոշումն ընդունված է. /որոշում N 25-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 3 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 26-Ա/

Լսեցին

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն Հարկային օրենսգիրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունն ու Յաշա Հայրապետի Ավետիսյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Սահմանել արտոնություն Յաշա Հայրապետի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Օպել Վեկտրա 1.7 Դ մակնիշի 22ՕՕ406 պետհամարանիշով ավտոմեքենայի 22220 (քսաներկու հազար երկու հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ գույքահարկի գծով՝ 2021 թվականից մինչև 2023 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածի պարտավորության նկատմամբ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 27-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԱՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ և 30-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ

ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 22-ի N 19 դրական եզրակացությունը՝ ***ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող 07-051-0315-0005 կադաստրային ծածկագրով 0.31654 հեկտարից 0.15 հեկտար և 07-051-0315-0004 կադաստրային ծածկագրով 0.02346 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի հողերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի նպատակային նշանակության փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը և Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները.

2) սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ներառել ընթացիկ տարվա հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-11 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 28-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 13-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում աղբահանության աշխատանքների իրականացման կարգը, աղբահանության պայմանագրերի ձևերը և համայնքի սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին» N 13-Ն որոշման N01, N03 և N06 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 3 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 29-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի ապրիլի 13-ը, ժամը՝ 17:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 30-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ _____

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ _____

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ _____

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԱՇԽԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ